Պետրոս Դուրյան

Իցի՛վ թե

Ո՛հ, ի՞նչ ես դու, սե՞ր, երկնի հուր կամ ժըպի՞տ . . .
Չ՚ունի երկին աչացդ կայծերն ու կապուտ,
Վարդը չ՚ունի քու լանջդ ամբիծ, լուսափթիթ,
Չ՚ունի լուսինն վարդերն շիկնոտ այտերուդ:

Գիշերն երկնի կայծից, լուսնույն սխրադեմ,
Ցերեկն ալյաց, ծաղկանց ժպտիս . . . մեկո՛ւն գեթ . . .
Իսկ քեզ համար ես արցունքով կ՚աղոթեմ,
Դու չ՚ես շնորհեր նայվածք մ՚ինձ հուր աչերեդ:

Արդյոք էա՞կ մ՚ես թե երկնի զըվարթուն,
Կը նախանձին փայլիդ վըրա վարդ, լուսնակ.
Ձայնիկդ ապշած լըսելով քաղցր ու թրթրուն՝
Նոճերու մեջ կ՚սըգա լըռիկ լուսինյակ:

Ծնեի իցի՛վ թ՚հևացող հով մ՚անուշիկ,
Եվ զգվելով երազք ճակտիդ այդ անսուզ՝
Տայի շունչըս շուրթերուդ մեջ ես հուշիկ,
Լոկ սրբելով՝ եթե շողար աչքդ արտսուք:

Պարտեզդ իցի՛վ թե փթթեի վարդ լացող,
Եվ երբ գայիր այգուն շաղին ժպտով պերճ՝
Գունովս ներկել այտերդ, թափել գոգդ իմ ցող,

Թոռմեի գիրգ ձեռքդդ տայի կյանքիս վերջ:

Բխեի ես իցի՜վ թ՝առու մը վրձիտ,
Եվ երբ հուշիկ նստած մոտ իմ եզերքին,
Ցոլանար իմ հայելվույն մեջ քու ժրպիտ՝
Պղտորելով կապույտ ալիքս՝ ցամքեին:

Ա՜հ, իցի՜վ թե լինեի ես ճառագայթ,
Շողշողայի դեմքիդ վրրա վայրիկ մի,
Խաբեի քեզ թ՝ես ավելի գեղազարդ,
Ի՝անուշաբույր մազերուդ մեջ մարեի:

Այլ ո՛չ, անգո՛ւթ, եթե տրվիր մեկուն սեր,
Իցի՜վ թ՝անոր գերեզմանին քարն լինիմ,
Եվ դու թոշնած գաս շնչե՜լ շուրջս . . . արտասվե՜լ . . .
Քեզ հրպելու համար հարկ լոկ գոլ շիրիմ . . .

1867